Your Ultimate Guide To Exploring ARARAT

It's time to explore, experience, and fall in love with our hometown– Ararat!

ԱՐԱՐԱՏ
2024

Table of Contents

04 The History of the Village

10 **Saint Hakob Church**

12 Chapel of Holy Martyrs of Ararat

14 Saint Tovmas Chapel

16 Vazgen Sargsyan House-Museum

18 Parks And Monuments

20 Local Library

22 Cuisine

23 References

Բացահայտելով Արարատը...

Սիրելի՛ ընթերցող, մեր ստեղծած ուղեցույցը կօգնի քեզ բացահայտել Արարատն իր ողջ հմայքով, վայելել տեղի տեսարժան վայրերը, սիրահարվել գյուղին և ստանալ անմոռանալի տպավորություններ:
Գրքույկը կտրամադրի քեզ ինքնատիպ խորհուրդներ և հավաստի տեղեկություններ, որոնք էլ կօգնեն քեզ առավելագույնս հաճույք ստանալ գյուղում անցկացրած հանգստից:

Անկեղծ և սրտաբաց բնակիչներ, դեպի բիբլիական Արարատ բացվող չքնաղ տեսարան, արևահամ մրգեր ու բանջարեղեն. ահա այն ամենը, ինչն իսկապես առանձնահատուկ հմայք է հաղորդում գյուղին:
Այս ուղեցույցը նպատակ ունի բացահայտել գյուղի տեսարժան վայրերը, որոնք գուցե աննկատ են մնացել անգամ շատ բնակիչների կողմից: Սեփական բնակավայրը ուսումնասիրելն ու բացահայտելը նույնքան տպավորիչ ու հետաքրքիր կարող է լինել, որքան օտար երկիր այցելելը:

Քո այցը գյուղ առավել տպավորիչ դարձնելու համար առաջարկում ենք ծանոթանալ գյուղի հիմնադրման պատմությանը և պատմամշակութային վայրերին, որոնց մասին տեղեկությունները մանրամասն ներկայացրել ենք ուղեցույցի հաջորդ էջերում:

The history of the village

There are many beautiful cities and towns in the world, but there is no place like **home**.

Welcome to the ultimate guide to exploring our hometown! Our brochure will be your ticket to uncovering the hidden gems and local attractions that will make you fall in love with our home town. We'll provide you with expert advice, first-hand knowledge, and insider tips on how to make the most of your local travel experience in Ararat.

The genuine countryside, warm-hearted locals, and farm-to-table cuisine are what truly set this village apart. Local travel has a unique charm that often goes unnoticed. Exploring a hometown can be as exciting as visiting a foreign land.

Let's dive into the best tips to make your local adventures memorable.

Արարատը՝ նախկին Դավալուն, Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն է, գտնվում է Արարատի մարզում: Արևելքից տարածվում են Ուրծի լեռները, դիմացը բիբլիական Արարատն է: Ոչ շատ հեռվից՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի երկայնքով, ձգվում է Արաքս գետը:

Ընդամենը 45 րոպե կպահանջվի Երևանից մեքենայով Արարատ գյուղ հասնելու համար: <<Սասունցի Դավիթ>> կենտրոնական ավտոկայանից հասարակական տրանսպորտը կամ ցանկացած տաքսի կհասցնեն քեզ Արարատ գյուղ մեկ ժամվա ընթացքում:
Իսկ եթե նախընտրում ես ճանապարհին անշտապ վայելել Խոր Վիրապի չքնաղ տեսարանը , կարող ես նաև օգտվել Հարավկովկասյան երկաթուղուց:

Ararat is situated in the Ararat region, surrounded by the picturesque Urts mountain range to the east, offering a stunning view of Mount Ararat in the foreground. The Araks River gracefully winds along the borders between Armenia and Turkey, not far from the village.

Just a 45-minute drive from Yerevan, Ararat is easily accessible. You can opt for public transportation from Sasuntsi David Central Bus Station or take a taxi, both of which will get you there within an hour. Nestled amid the mountains of Urts, Ararat serves as the starting point for those choosing a more leisurely journey to Khor Virap by train.

Եղել է, չի եղել...

Համաձայն ավանդության՝ Օհան անունով մի շինարար Ակոռիից իր կնոջ, երեք որդիների և դստեր հետ գալիս, կանգ է առնում Արաքսի ձախ ափից ոչ շատ հեռու՝ երեք բլուրների մոտ:
Առ այսօր գյուղի հնադարյան գերեզմանոցում պահպանվում է մի մատուռ, որը կոչվում է Օհանի անունով: Մատուռը ուխտավայր է:

Գյուղում պահպանվել են 1600-ական թվականների գերեզմանաքարեր , այդ իսկ պատճառով էլ գյուղի գերեզմանոցը համարվում է պատմամշակութային հուշարձան:

Ըստ բանավոր աղբյուրների՝ գյուղի առաջին անունը եղել է Օհանաշեն, ապա՝ Մարտակերտ: XVII դարի գրավոր աղբյուրներում հիշատակվում է որպես Դավալու: 1828 թ. ներգաղթի ժամանակ գյուղում հաստատվում են նաև մի քանի թուրք ընտանիք: Նրանք էլ գյուղը վերանվանում են Դավալու:

According to the tradition...

the village **Ararat** has been founded in ancient times. The founder has been a builder named Ohan. He had come from Akory together with his three sons. Up to this day a chapel has been preserved in the ancient cemetery of the village, which is called after Ohan's name. There is a grave in the chapel with a gravestone on it. The chapel is a sacred place.

The first name of the village according to the oral sources was **Ohanashen** then- **Martakert**.

The ancient cemetery of the village

During the periods of migration some families of Turks also were established in the village and they renamed the village **Davalou**. In 1935 the settlement has been renamed **Ararat** (A. Khachatryan, 1995).

Սուրբ Հակոբ Եկեղեցի

Կառուցվել է 1866 թ. Պարսկաստանի Մակու քաղաքից այստեղ ներգաղթած հայերի նախաձեռնությամբ: Բազիլիկ կառույց է, որը երկու շարք երեքական մույթերով բաժանվում է երեք նավերի: Կիսաշրջանաձև խորանի երկու կողմերում ուղղանկյուն ավանդատներ են: Ձախակողմյան ավանդատան մոտ մկրտության ավազանն է: Խորանի աջ և ձախ կողմերում կամարակապ որմնախորշեր են: Եկեղեցին ունի երեք մուտք՝ հյուսիսային, արևմտյան և հարավային: Կառուցված է տեղական գորշ տրավերտին քարով: Պատերը ներսից սվաղված են կրով:

Եկեղեցուն կից զանգակատունն է, որը կառուցվել է 1866 թ.: Զանգակատունը վերակառուցվել է 2008-10 թթ:



Եկեղեցու բակում՝ Զորավար Անդրանիկի և Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների կողքին, կանգնեցվել է նաև սպարապետ Վ. Սարգսյանի հուշաքարը:

Saint Hakob Church

was founded in 1866.

"The building is a three-nave basilica constructed from gray hewn stone. The church features three entrance doors, each opening from the western, northern, and southern parts of the structure."



"In the churchyard, there stands a memorial dedicated to General Andranik and other fedayi."

Սրբոց Նահատակաց Մատուռ

1991 թվականի նոյեմբերի 24_ին տեղի է ունեցել մատուռի հողօրհնությունը, որից անմիջապես հետո ձեռնարկվել են շինարարական աշխատանքները: Մատուռը նախաձեռնել է Ռուբիկ Գրիգորյանը՝ համաձայն իր տեսիլքի, և հանձն առել աշխատանքները:

Սակայն 1999 թվականից մինչև 2018 թվականը մատուռը գտնվել է կիսակառույց վիճակում: Վերը նշված ժամանակահատվածից շարունակվել են աշխատանքները և ավարտվել 2021 թվականին: Նույն թվականի նոյեմբերի 7-ին Մասյացոտն թեմի առաջնորդի ձեռամբ օծվել է մատուռը և դարձել թեմում գործող երկրորդ սրբավայրը:

📍 Գտնվում է Պապսար կոչվող բլրի գագաթին՝ 921 մետր բարձրության վրա:

Chapel of Holy Martyrs of Ararat

The Chapel has been built on the hill called Papsar.
The construction of the chapel started in 1991, thanks to the sponsorship of Roubik Grigoryan.

However, the First Divine Liturgy was celebrated on November 7, 2021, as the construction of the chapel had been stopped.

Սուրբ Թովմասի մատուռ



Զատկին հաջորդող շաբաթ օրը նշվում է որպես **Թումառաքել** վանքի օր: Ահա այսպես են գյուղացիները անվանում Թովմաս Առաքյալի մատուռը: Ըստ Հայաստանի պետական արխիվի՝ երբ դեռ կառուցված չէր Սբ. Հակոբ եկեղեցին, Հակոբ եպիսկոպոս Մուրադյանի հրամանով թույլատրվել է Դավալու գյուղի մատառում իրականացնել պատարագներ:

Ըստ գյուղացիների՝ մատուռը օժտված է հրաշագործ հատկությամբ: Սուրբ Թովմասի անվան հետ են կապում բազմաթիվ հիվանդությունների բուժում, ինչպիսիք են գորտնուկը, դիվահարությունը, վերքերը, համրությունը և այլն: Թումառաքելի հզորությունը հավաստել են շատ այլադաններ՝ քրդեր, եզդիներ, թուրքեր :

Saint Tovmas Chapel



Every year on Saturday following Great Lent villigers celebrate the day of Tumarakel.

Among Armenians, there are secondary sacred places where they light candles and say prayers. One of these places is the Saint Tovmas Chapel (Tum Arakel), resembling a small house that holds significance as a pilgrimage site.

Saint Tovmas is an ancient chapel where individuals tie a piece of their clothing or a strand of hair, make a wish, and firmly believe that it will come true

Վազգեն Սարգսյանի տուն-թանգարան

Վազգեն Սարգսյանի տուն-թանգարանը նվիրված է հայ հասարակական-քաղաքական և ռազմական գործիչ Վազգեն Սարգսյանի կյանքին ու գործունեությանը: Բացվել է 2001 թ-ի մարտի 5-ին: Թանգարանում ամփոփված է Վազգեն Սարգսյան գրողի, զինվորի, սպարապետի, պետական գործչի կյանքն ու կենսագրությունը ներկայացնող պատմությունը:

Տուն-թանգարանի բակում տեղադրված է սպարապետի կիսանդրին: Սպարապետի ծննդյան օրը՝ մարտի 5-ին, թանգարանում կազմակերպվում են տարբեր միջոցառումներ:

Գպրեգին Նժդեհի փող. 7, Արարատ գ., Արարատի մարզ, Հայաստան

+374 93 780046

Vazgen Sargsyan House-Museum

Vazgen Sargsyan House-Museum is dedicated to the life and activities of the Armenian public-political and military figure Vazgen Sargsyan. It was opened on March 5, 2001. The museum summarizes the life and biography of Vazgen Sargsyan, a writer, soldier, general and statesman. In the yard of the house-museum, there is a bust of the sparapet.

On Sparapet's birthday, on March 5, various events are organized in the museum.

📞+374 93 78 00 46

📍Garegin Nzhdeh str. 7, Ararat region, Armenia

Զբոսայգին և հուշահամալիրները

Զբոսայգին գտնվում է անմիջապես գյուղի սրտում՝ գյուղամիջում: Այստեղ կարող ես անցկացնել ամառային երեկոները, վայելել գունավոր շատրվաններն ու լսել հաճելի երաժշտություն:

Այգու կենտրոնում վեր է խոյանում մի հուշահամալիր՝ նվիրված Արարատի հիմնադրման 150-ամյակին և Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին: Ճարտարապետ՝ Լ. Էլոյան: Հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1983 թվականի մայիսի 9-ին:



Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված հուշապատ

Parks And Monuments

Right in the heart of the village, there is a park where you can spend your summer evenings admiring colorful fountains.

Additionally, a memorial dedicated to the victims of World War II graces the park. The unveiling ceremony for this memorial took place on May 9, 1983, and the architect behind its design was L. Eloyan.

Another monument, commemorating the victims of the First Nagorno-Karabakh War, was erected in the center of the village

Գյուղն ունի հարուստ գրադարան՝ մի կախարդական վայր, որտեղ բազում աշխարհներ կարող ես բացահայտել: Իսկ ինչպե՞ս հայտնվել այդ կախարդական վայրում. գաղտնաբա՞ռ, կախարդական գավազա՞ն... Ո՛չ, սիրելի՛ բարեկամ: Պարզապես պետք է ձեռք բերել գրադարանի ընթերցողի տոմս:

Գրադարանն իր ընթերցողին է առաջարկում մի շարք հատուկ ծրագրեր, ինչպիսիք են՝ հեքիաթների ընթերցում, պատմվածքների քննարկում, կինոդիտում, վարպետաց դասեր և այլն:

📍Արարատ գյուղի մշակույթի տուն

The village has a rich regional library which is a magical place full of different worlds to explore. How do you get to this magical place? **Do you need fairy dust? A secret code word? A magic wand**? Nope! You just need...a **library card**!

📍Ararat Cultural Center

The library offers special events such as story time, special classes, and collections of music and movies.

Ազգային Խոհանոց

Գյուղը կարելի է բացահայտել նաև շատ հետաքրքիր մի տարբերակով՝ համային զգայարանների միջոցով:

Ազգային խոհանոցն է, որ գյուղին հաղորդում է հաճելի համ ու հոտ, որը չես գտնի ուրիշ ոչ մի տեղ:

‹‹Ծոփք›› հացատանը կարող ես համտեսել ազգային լավագույն ուտեստները, վայելել արարատյան դաշտի արևահամ մրգերը, ըմբոշխնել Արարատի գինու գործարանի լավագույն խմիչքները: ‹‹Ծոփքում›› քեզ կզգաս բնությանը մոտ, իսկ գեղեցիկ կահավորված տաղավարները հանգիստդ կամբողջացնեն՝ ազգային շունչ հաղորդելով :

Հացատունը հնարավորություն է տալիս տեսնելու հայկական ավանդական լավաշի պատրաստման ընթացքը: : Այստեղ կվայելես հարիսա, տոլմա, թոնրի խորոված, ղափամա և քաղցրահամ գաթա:

Cuisine

Discovering our hometown is even better when you dive into the local cuisine. Every place has its unique dishes, and the tastiest way to connect with our village is through our sense of taste. Local cuisine brings a special flavor that you won't find anywhere else.

At Hacatun Tsopk, villagers strive to offer the finest food and drinks from the region. Witness the traditional making of Armenian flatbread, lavash, and savor dishes such as Armenian Harissa, Dolma, Khorovats, and Ghapama and Gata.

References

1. Խաչատրյան Ա., Արարատ, Երևան 1995
2. Հակոբյան Ս., Արարատի մարզ. Պատմական ակնարկ, Երևան, 2010:
3. https://hushardzan.am/archives/7866
4. https://hushardzan.am/archives/3938
5. https://vcity.am/ru/listing/vazgen-sargsyans-house-museum/
6. https://araratcity.am/upload/DocFlow/Council/Tu2231510002231842_04.docx
7. https://www.shoghakat.am/am/news?page=98

Արարատ գյուղի Վ. Սարգսյանի անվան թիվ 1
միջնակարգ դպրոց
2023-2024 ուս. տարի
VII դասարան
Նախագծային աշխատանք <<Իմ համայնքը>>